



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ԷՆՍԻՆՅԻ ՄՐԲՈՅ ՆԱՅԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՅ ԱՆՈՒՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ  
ՏՕՒԻ ԿՈՒԹՈՎ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔԻՆ

## «ՏԵՇ ՄԵԱՆՔ ՄԵՐ ՅՈԳԵՒՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ»

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Տօնացոյցին համաձայն Ճարաթ, 31 Յոկտեմբեր 2009-Ն յիշատակն էր Ամենայն Սրբոց: Կիրակի, 1 Նոյեմբերի առաւօտուն, Էնսինյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Եւ անմահ Պատարագ մատուցանեց Թեմիս Բարեշան Առաջնորդ՝ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան: Ս. Սեղանին սպասարկեցին Յոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան Եւ Արժ. S. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան: Ս. Պատարագին աղօթակից էր նաեւ Գերշ. S. Եփրեմ Արք. Թապագեան:

Հաւատացեալներու բազմութիւնը Երկիւղածութեամբ կ'ունկնդրէր ու կը մասնակցէր Ս. Պատարագի Երգեցողութեան: Երգեցողութիւնը կը կատարուէր Եկեղեցւոյս սարկաւագաց ու դպրաց դասերուն, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ Վարժարանի պատանիներուն կողմէ:

Պահը հոգեթով էր ու մթսոլորտը՝ աղօթաբոյր: Երկիւղած խոնարհումով մարդիկ թափօրի խաչը կը համբուրէին, ծնողները իրենց զաւակները կ'առաջնորդէին Պատարագիչ Սրբազան Յօր ձեռքի խաչը համբուրելու:

Զարողի պահուն, Առաջնորդ Սրբազանը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ 46 տարիներ շարունակ պահպանեց ու աճեցուց Յովիտի Յայ համայնքն ու Սրբոց Նահատակաց Եկեղեցին: Սրբազանը նշեց, թէ քանի որ սուրբերը նաեւ նահատակներ են Եղած, կենդանի՝ վկաներ, եւ որովհետեւ այս Եկեղեցին կնքուած է Սրբոց Նահատակաց անունով, արդ՝ այսօր Էնսինյի Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է, ուստի Սրբազանը իրաւիրեց Ներկաները, իբրեւ մեկ Յօր որդիներու, իրենց հաւատքի ուխտը վերանորոգելու եւ հոգեւորապէս առաւել եւս ծաղկեցնելու այս Եկեղեցին ու գաղութը: Ազա անդրադառնալով Ամենայն Սրբոց տօնին, Սրբազան Յայը բացատրեց, թէ սուրբերը Զրիստոսի համար նահատակուած հաւատքի ախոյեաններ են, իրենց արիւնով վկայած են եւ իրենց կեանքերը

Նուիրաբերած՝ պաշտպանելու քրիստոսի անունը: Անոնք անձնագոհ վկաներ են քրիստոսի եւ իրենց թափած արիւնով եւ ունեցած ապառաժեայ հաւատքով հաստատած են քրիստոսի Ս. Եկեղեցին: Անոնք Աստուծոյ պատուիրանները իրենց կեանքին մէջ գործադրելով դարձան Եղբայրները քրիստոսի, որ ըսաւ՝ «Մայրս ու Եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն» (Ղկ 8.21): Սուրբերը ո՛չ միայն Աստուծոյ խօսքը սորվեցան ու լսեցին, այլ մանաւանդ՝ գործադրեցին ու Եղբայրացան քրիստոսի:

Անոնք իրենց կեանքով ու ևահատակութեամբ նոյնիսկ վկայեցին իրենց հաւատքին մասին, եղան քրիստոսի անունին համար բազմաչարչար վկաներ, խոստովանողներ, եւ իրենց հաւատքին մէջ մնացին անխախտ ու անսասան, չշեղեցան իրենց առաքելութեան ճամբէն, այլ հաստատ քալեցին ճշմարիտ ճամբէն եւ մեզի ալ կտակեցին քալել նոյն ճամբէն: Անոնք հաւատքը մեզի կտակ՝ ծգեցին, հոգեւոր հարստութիւն մեզի ծգեցին: Ուստի՝ տէ՛րը մնանք այդ հոգեւոր ժառանգութեան, քալենք այն ճամբէն՝ որ իրենցը եղաւ, եւ Աստուծորդուոյն պատուիրաններուն հաւատարմութեան մէջ ապրինք, ու իրենց մեզի թողած աւանդը մեր մէջ միշտ վառ պահենք, պատգամեց Առաջնորդ Յայրը: Այսօր, այո՛, մենք բոլորս կը գտնուինք նիւթական տագնապներու դիմաց, բազմապիսի դժուարութիւններ ու փորձութիւններ կը կրենք, սակայն անոնք պէտք չէ շփոթի մատնեն մեզ ու պէտք չէ մեզ տկարացնեն մեր հաւատքին մէջ, այլ մեր հայեացքը պէտք է միշտ ուղղենք քրիստոսի, անշեղ մնանք մեր հաւատքին ու համոզումներուն մէջ, որոնք մեզի կտակուած են մեր հայրերէն, որպեսզի կարենանք բարիով յաղթենք չարին ու մեր հաւատքով դուրս գանք այդ տագնապներէն: Յաղթանակը պիտի շահի ան՝ որ կը համբերէ ամեն տեսակ փորձութեանց, եզրակացուց Սրբազանը:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Յօր գլխաւորութեամբ, թափօրը առաջնորդուեցաւ «Աւետիսեան» սրահ, ուր Եկեղեցւոյս Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած էր մատաղը: Կատարուեցաւ մատաղորինէք:

Սրբազան Յայրը օրինեց եւ բարձր գնահատեց Տիկնանց Միութեան եւ Յոգաբարձութեան անդամներուն մատուցած ծառայութիւնը, ինչպէս նաեւ մատաղին իրենց նիւթաբարոյական օժանդակութիւն բերած բոլոր հաւատացեալները, յատկապէս Տիկ. Ժանեթ Վարդազարեանը, որ ի յիշատակ իր ամուսնոյն՝ հանգուցեալ Ռազմիկ Վարդազարեանի, յանձն առած էր մատաղի հովանաւորութիւնը: Սրբազան Յայրը օրինեց նաեւ յիշատակը բոլոր անոնց, որոնք հաւատքով հիմք դրին այս Եկեղեցւոյ, եւ բոլոր նախկին սպասարկուներուն՝ որոնք գործեցին ու անցան:

Աւարտին՝ Սրբազան Յօր «Պահպանիչ»ով եւ «Կիլիկիա» մաղթերգով վերջ գտաւ հոգեպարար արարողութիւնը, որմէ ետք հաւատացեալները կարգով մօտեցան եւ վերցուցին մատաղի իրենց հրամցուած բաժինը եւ հոգենորոգ ուրախութեամբ վերադարձան իրենց տուները:

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE NAME DAY OF HOLY MARTYRS CHURCH**

On Saturday, October 31<sup>st</sup>, 2009, the Armenian Church observed the Feast of All Saints' Day, which is also the name day of Holy Martyrs Church in Encino. On this occasion, on Sunday, November 1<sup>st</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Holy Martyrs Church. Assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Razmig Khatchadourian. H.E. Archbishop Yeprem Tabakian also participated in the service.

The Prelate began his sermon by giving thanks to God for His blessings and guidance to Holy Martyrs Church over the past 46 years. In honor of the name day of the Church, the Prelate invited the faithful to renew their vow of faith and their commitment to the splendor of the Church and community.

Speaking on the Feast of All Saints' Day, the Prelate explained that our saints are champions of our faith who gave their lives for Jesus Christ. They are living witnesses of Christ who with their bloodshed and unwavering faith established the Church. Our saints not only heard the commandments of God, they heeded His commandments and applied them in their lives. They left for us a legacy of faith and spiritual riches, and it is our responsibility to remain true to that legacy, to walk in the path of righteousness just as they did, and to live our lives true to the commandments of our Lord. The Prelate concluded, acknowledging that though we find ourselves in difficult economic times, we must not be disheartened or lose faith; on the contrary, we must remain unyielding in our faith and continue to look to Jesus Christ for guidance to overcome any obstacles.

At the conclusion of Divine Liturgy, the Prelate was led in a procession to "Avedessian" Hall where he blessed the *madagh* that was prepared by the parish Ladies Auxiliary. The Prelate conveyed his blessings and commendations to the Pastor, Board of Trustees, Ladies Auxiliary, and all the servants of the church for their devoted service, as well as the faithful for their support, specifically Mrs. Janet Vartazarian who had taken on the sponsorship of the *madagh* in memory of her husband Razmig Vartazarian. The Prelate also honored the memories of the founders of Holy Martyrs Church and the servants who are no longer with us.

The ceremony came to a close with the Prelate's benediction and the singing of the Cilician anthem.